ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի գ. Շիրակամուտ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 14 » ապրիլի 2017 թվականի N 14-Ա

06-087-0042-0005 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով քաղաքացի Վ. Պալյանի դիմումը, ԳՈՒԳԱՐԱՑ ԱՇԽԱՐՀ ՍՊԸ-ի կողմից կազմված հատակագծերը, Հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 12.06.1992թ. թիվ 17-4/61 որոշումը, Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ հոդվածով, ՀՀ ՀՕ 60-րդ և 64-րդ հոդվածներով, Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին ՀՀ օրենքի 2-ին և 3-րդ հոդվածներով, Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին ՀՀ ՀՕ 510-Ն օրենքի 7 հոդվածի 1 կետով, ՀՀ կառավարության 2005թ. Դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ,

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վերականգնել և օրենքի ուժով ճանաչել 06-087-0042-0005 ծածկագրի տակ գտնվող 0.1367հա բնակելի տան կառուցման և սպասարկման հողամասի և հողամասում գտնվող այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներ իրականացրած և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող 1989-90թթ. կառուցված 178.51քմ մակերեսով բնակելի տան, 1993թ. կառուցված 12.9քմ մակերեսով անասնագոմի, 1993թ. կառուցված 23.97քմ մակերեսով անասնագոմի նկատմամբ Վաչագան Զաքարի Պալյանի /ծնված 1957թ./, Մարգարիտա Գրիգորի Հարությունյանի /ծնվ. 1960թ./, Նունե Վաչագանի Պալյանի /ծնվ. 1986թ./, Գևորգ Վաչագանի Պալյանի /ծնվ. 1987թ./ և Նարինե Վաչագանի Պալյանի /ծնվ. 1990թ./ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասից հատկացած 0.128հա հողամասն անհատույց սեփականության իրավունքով վերահատկացնել, իսկ հատկացվածից ավել զբաղեցրած 0.0087հա հողամասի նկատմամբ օրենքի ուժով ճանաչել Վաչագան Զաքարի Պալյանի /ծնված 1957թ./, Մարգարիտա Գրիգորի Հարությունյանի /ծնվ. 1960թ./, Նունե Վաչագանի Պալյանի /ծնվ. 1986թ./, Գևորգ Վաչագանի Պալյանի /ծնվ. 1987թ./ և Նարինե Վաչագանի Պալյանի /ծնվ. 1990թ./ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը:

3. Հողամասը չի գտնվում ինժիներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներիում, չի գտնվում << ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ, հողամասի սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները:
4. Անշարժ գույքին տրամադրել փոստային հասցե՝ Կրասնոդարյան փողոց, թիվ 60 բնակելի տուն:
5. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 07/04/2017թ. թիվ 13-Ա որոշումը:
6. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
7. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման << կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Լոռիի տարածքային ստորաբաժանումում:

Համայնքի ղեկավար՝ Ս. Մազմանյան